ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՆԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գրական լեզվի նորմավորման բացակայության պայմաններում միջին հայերենը լայնորեն ներթափանցված էր խոսակցական լեզվի տարրերով։ Վերջիններս որպես կենդանի, ժողովրդական զգացական խոսքի արտահայտություն յուրատեսակ գունավորում են հաղորդում ժամանակի լեզվին, որը դրսևորում է լեզվական յուրօրինակ հնարանքներ ու ոճական բազմապիսի ձևեր։ Խոսակցական լեզվի ազդեցությամբ գրական լեզվի մեջ հանդես են գալիս նաև քերականական, շարահյուսական կապակցման այնպիսի ձևեր ու միջոցներ, որոնք գրաբարի և ժամանակակից հայերենի համար լինելով շեղումներ միջին հայերենի համար սովորական են։ Այդ շեղումները ուրիշ խոսքով կոչվում են անհետևողություններ կամ անկապակցություններ, որոնց լեզվական վերլուծությունն ու նկարագրությունը խիստ անհրաժեշտ է ինչպես գործնական, այնպես էլ տեսական առումով։

Շարահյուսական անհետևողություն կամ անկապակցություն անվան տակ հասկացվում են քերականորեն կամ տրամաբանորեն ոչ ճիշտ լեզվական ձևերն ու կառուցվածքները։ Անկապակցություն ասելիս չպետք է հասկանալ գրվածքի ոճական առանձնահատկությամբ պայմանավորված երևույթ։ Որովհետև եթե ոճը իմաստային ու կառուցվածքային առումով հոմանիշ բառերի կամ կապակցությունների միջև ընտրության արտահայտությունն է, իսկ այդ բառերն ու կապակցությունները վերջ ի վերջո քերականորեն ու շարահյուսորեն ձևակերպվում են լեզվի ընդհանուր օրինաչափությունների համաձայն, ապա անհետևողականությունը վերաբերում է լեզվի կամ տվյալ շրջանի ընդունված նորմայից կատարվող շեղումներին։

Միջին հայերենի շարահյուսական անհետևողությունների դեպքերը վերաբերում են մեծ մասամբ նախադասությունների կառուցվածքին և բարդ նախադասության բաղադրիչների կապակցության միջոցների գործածությանը։ Շարահյուսական անկապակցություն է առաջացնում նախադասության կազմում հաղորդակցական առումով անհրաժեշտ բառերի կամ դարձվածների պակասը, որոշ բառերի կամ դարձվածների անհարկի ներկայությունը, ստորոգյալի դիմավոր ձևով արտահայտված նախադասության դերբայական դարձվածի կառուցվածքային հատկանիշների չտարբերակումը, ուրիշի ուղղակի խոսքի և սնուղղակի խոսքի հատկանիշների խառնումը և այլն։ Բարդ նախադասության կապակցման միջոցների անհետևողականություններն առաջ են գալիս շաղկապների ու հարաբերական բառերի սխալ ընտրության, դեղչման, ավելորդ գործածության և այլ ձևերով։

***

Բարդ նախադասության կառուցվածքային մասերի անհետևողությունը հիմնականում առաջանում է այդ մասերի անդամների քերականական ձևա-

վորման անհամապատասխանությամբ։ Այդ անհամապատասխանությունը հանդես է գալիս այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ տարբեր կառուցվածքների խառնումը, իմաստի տեսակետից անհրաժեշտ բառերի կամ կապակցությունների պակասը կամ ավելադրությունը, բարդության մասերի թվական անհամաձայնությունը, շրջադասությունը և այլն։

1. Կառուցվածքների խառնում. Սա հանդես է գալիս այն դեպքում, երբ բարդ հարաբերությամբ միավորված նախադասությունները իրենց քերականական բնույթով չեն համապատասխանում միմյանց։ Այսպես, բարդ նախադասության առաջին բաղադրիչը արտահայտվում է դիմավոր ստորոգյալով. իսկ երկրորդը՝ դերբայական դարձվածով, թեև կապակցվում է ստորադասական շաղկապով։ Օրինակ՝ «Ապա թէ դմէկն սպաննէ ու զմէկն թողու, նա զէդ մարդասպան դատեն զինքն վասն զի կարեր որ ատել զմարդ. և բարուրք անել, որ դինք...» (ՍԳԴ, 52)։ Ինչպես տեսնում ենք, որ շաղկապի ներկայությունը պահանջում է, որ երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտված լինի դիմավոր ձևով՝ «կարեր, որ ատեր զմարդ»։ Հակառակ դեպքում անհարկի է շաղկապի գործածությունը։ Նախադասությունը քերականորեն հիշտ ձևակերպված կլինի այսպես՝ «կարեր ատել զմարդ»։

Երբեմն քերականական անհամապատասխանություն է առաջանում նախադասության մեջ ստորոգելիական հանգույցի զեղչման պատճառով։ Օրինակ՝ «Այլ դեռ վասն հարբեցութեան եկեղեցականաց կու հրամայէ օրէնքս, որ ուտելն և խմելն չէ քանց վասն այնոց, որ մարմինն լցվի և կշտանայ, և որ ասվելի է, նա պեղծ է և ագահութիւն պատճառ ամէն չարեաց» (ՍԳԴ, 69)։

Կառուցողական անհետևողականություն է առաջանում նաև շարահարակն կապակցության ժամանակ։ Ինչպես դիտենք, շարահարությամբ կապակցված նախադասությունների միջև զուգադրա-հակադրական հարաբերություն արտահայտվում է բարդության մասերի բառական համապատասխան համամասնությունների (սիմետրիայի) շնորհիվ. անհրաժեշտ է, որ հակադրվող դատողությունների համապատասխան անդամները շարահյուսվեն համապատասխան ձևով։ Այս կանոնի զանցառումը առաջացնում է շարահյուսական անհետևողություն նման կապակցությունների սահմաններում։ Օրինակ՝ «Նման էր այն պտղոյն, որ Ադամ կերավ խաբանօք,

Կերավ՝ ի դրախտէն ելավ, ես ի քո ծոցոյդ կարոտով» (ՆՔ, 132)։

Ընդգծված շարահարական նախադասության երկու մասերում զուգաչափորեն իրար համապատասխանում են՝ երկու մասերի տեղի պարագաները (ի դրախտէն, ի քո ծոցոյդ), որ ճիշտ է, և մասերից մեկի ստորոգյալը—մյուսի՝ ենթական (կերավ. ես), որ սխալ է։ Բացի դրանից, երկրորդ նախադասության կերավ ստորոգյալը, որ կրկնված է նախորդ նախադասությունից, այստեղ ավելորդ է։ Ի վերջո, երկրորդ նախադասության մեջ զեղչված են և՛ ենթական (Ադամ) և՛ ստորոգյալը (ելավ), որը քերականորեն և տրամաբանորեն անբույլատրելի է։ Այս նախադասությունը քերականորեն ճիշտ կլիներ՝

«Նման էր այն պտղոյն, որ Ադամ կերավ խաբանօք,
Նա (կերավ) ի դրախտէն ելավ, ես՝ ի քո ծոցոյդ կարոտով»։

2. Պակասավոր կառուցվածքներ. Այն դեպքերում, երբ բարդ նախադասության բաղադրիչներից մեկի կազմում զեղչվում է այնպիսի անդամ, որի

հաղորդակցական դերը անհրաժեշտ է տվյալ բարդ կապակցության ամբողջական իմաստի ձևավորման մեջ, ստեղծվում է թերիմաստ, երբեմն անհասկանալի կապակցություն։ Օրինակ՝ «եւ չէ այն ջուրն քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական» (ՍԳԴ, 20)։

Համեմատենք՝ «եւ չէ այն ջուրն ուրիշի, քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական»։

3. Միևնույն բառերի կամ դարձվածների կրկնություն բարդ նախադասության տարբեր մասերում. երբեմն գրողը կամ խոսողը մոռանում է, որ այս կամ այն անհրաժեշտ բառը կամ արտահայտությունը արդեն գործածել է, ուստի կրկնում է այն։ Այդ կրկնությունը արվում է նույն ձևով կամ այլ ձևակերպումով։

ա) Նույնաբանական կրկնություն—այսպես է անվանվում կրկնության առաջին տեսակը, երբ միևնույն նախադասության կազմում ճիշտ նույն ձևով արտահայտված շարույթներ կրկնվում են։ Օրինակ՝ «Նա ունի անսիզոլս համանք, որ կարէ այնել, ապա ի վերայ իր բաժնին, որ է իր բաժինն ի յամէն իրացն և ի հայրենացն յերեք բաժնէն մեկն» (Անս, 49)։ «Եթէ լինի դատըստընել 'ի դարպասն որ լիճ ճորտեր իրաց ուժ լինան արել, կամ անլիճ լճի, կամ լիճ անլճի, ղինչ ու լինի որ ուժ լինան այրել, և կամ խլոցք, որ դատըստնի մեկն, ու մէկայլն լսէ, նա պատեհ է որ մենակ գայ մէկայլն յառաջ և տֆնդէ.... (Անս, 27)։ Կապակցման այս ձևը ժողովրդական կենդանի խոսքի յուրահատուկ արտահայտություն է, որտեղ պարզ երևում են խոսողի մտքի բոլոր նրբերանգները։ Այսպես, գործողության ենթական (լիճ ճորտեր) ու ստորոգյալը (ուժ լինան արել) արտասանելուց հետո խոսողը կամ գրողը անհրաժեշտ է համարել ենթակայի իմաստը բացատրել, պարզաբանել (լիճ անլճի կամ անլիճ լճի), և որովհետև փաստորեն ենթական ասել է, ապա ստորոգյալը նորից է կրկնել, որպեսզի նրա արտահայտած իմաստը չմոռացվի։ Փորձենք վերադասավորել այս նախադասության բաղադրիչները. «Եթէ լինի դատըստընել 'ի դարպասն ղինչ ու լինի՝ լիճ ճորտեր կամ անլիճ լճի կամ լիճ անլճի, որ իրաց ուժ լինան արել և կամ խլոցք, որ դատըստնի մէկն, ու մէկայլն լսէ, նա պատեհ է որ մենակ գայ մէկայլն յառաջ և տրֆնդէ»։

Նույնաբանական կարելի է կոչել նաև այն կրկնությունը, երբ նախադասության մեջ ենթական կրկնվում է դերանվան միջոցով։ Օրինակ՝

«Դերի զիմ որդին գերրավ, ուստի ճուղապ գընալուն,
Միթէ թագաւորն երկնից՝ նա բերէ զիմ որդին ի տուն» (Ֆր., 342)։

բ) Ավելաբանական (պլեոնաստիկ) կրկնություն— այս դեպքում որպես ավելադրություն կրկնվում են նույնարմատ բառեր տարբեր քերականական կազմությամբ։ Օրինակ՝ «խաղ խաղալ», «գիծ գծել» և այլն։ Միջին հայերենում վերլուծական խոսքի հատկությամբ հաճախ անորոշ դերբայով արտահայտված խնդիրը շարույթի հաջորդ մասում կրկնվում է դիմավոր ձևով։ Սա իր հերթին առաջացնում է շարահյուսական կապակցությունների խառնում։ Օրինակ՝ «Եւ 'ի գրաստնոյն հանելն որ 'ի յերկրես կու հանեն նա կու տան 'ի ձին ուի ջորին,— չորս և 'ի յէշն նոր դրամ հինգ» (Ալիշան, Սիսուան, 387)։ «Բայց զայս դեղերուն գիտենալն՝ հինգ ցեղ իրօք կու գիտենան» (ԱԱԱԱ, 5)։

4. Բակառություն. Այս բառով անվանվում է նախադասության անդամների թվական այնպիսի անհամաձայնությունը, երբ օրինակ ստորոգյալը հոգ-

նակի թվով է դրվում եղակի ենթակայի բառական իրական իմաստի պահանջով, ինչպես, օրինակ՝ «մեծ մասը եկան։ Մենք այսպես ենք անվանում նաև բարդության մասերի թվական անհամաձայնությունը, որը մեծ մասամբ հանդես է գալիս կախյալ կապակցության մեջ. գերադաս մասի ստորոգյալի արտահայտած քերականական թիվը պահանջում է կախյալ մասի համապատասխանություն, մինչդեռ քերականական թվային համապատասխանությունը իսպիտվում է տրամաբանական թվային համաձայնությամբ։ Օրինակ՝ «Կարգավոր շատ կա, անեփ, անխաշ են, Թալիմ չեն առել բաղում ղումաշէն» (ՆՀ, 53)։ Թեև իմաստային առումով նախադասության բովանդակությունը հասկանալի է, այնուամենայնիվ քերականորեն ճիշտ չի ձևակերպված։ Այս նախադասությունը կարելի կլինի փոխակերպել՝ ա) Կարգավորք շատ կան, անեփ անխաշ են։ բ) Կարգավոր շատ կա, անեփ, անխաշ է։ Շարահյուսական այսպիսի անկապակցություն նկատվում է և պարզ նախադասության սահմաններում, երբ նախադասության ենթակայի ու ստորոգյալի քերականական թվերը համաձայնեցված չեն լինում։

5. Խոսքի շղթայի անմիակցվածություն. Ժողովրդական խոսակցական ոճի արտահայտություն է, երբ արտասանության կամ գրության պահին ամբողջական միտքը խիստ դանդաղ է ձևակերպվում։ Խոսքային շղթան կազմող նվազադույն ասույթների միակցումը թույլ է. ամբողջական միտքը ղարգանում է դանդաղ ու աստիճանաբար։ Այդպիսի ոճով է գրված Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»-ն ու «Անսիզ Անտիոքայ»-ն։ Այս ստեղծագործությունները կարդալիս ստանում ենք այն տպավորությունը, որ խոսքը բանավոր է և խոսողը հետևելով իր մտքում առաջացող զուգորդություններին, արտաբերում է դանդաղ ձևակերպվող մտքերն ու դատողությունները, ուշադրություն չդարձնելով նրանց քերականական ձևավորմանը։ Ընդ որում, այսպիսի կապակցությունների մեջ կարելի է հանդիպել շարահյուսական անհետևողությունների մի քանի ձևերի։ Բերենք օրինակներ. «Եւ այն, որ գրաստ վնասի, նա ղէտ, որ ղրեցաք, թէ բանտվողէն լինի, ու ասէ, թէ գանէ կամ վարէ, և նա ղհրամանն կատարէ ու մեռնի, նա անպարտ է, բայց ի հրամանաց ելածն և ընդ ախտիրթութենէ պատահածն, ու ընդ այլ դեհն գնացածն քան ընդ պարոնն հրամայէ, նա լման վճար պիտի անէ» (ՍԳԴ, 78)։ «Եթէ ուրդի որ ոք մի սայլած լինի դինչ ու լինի դատստնիլ ու վ՝ ուղել ղիրաւունքն 'ի յիր խամէն, որ չլինին երկու խիսմն կարևորք իրաց» (Անս, 23)։ «Եօթևորդն այն է, որ ասեն թէ այս դեղերուս մուտն եւ գործն կայ, հանապաղ է. եւ թէ ուտեն մի լինի եւ ուտեն մին չլինի, դու գիտացիր, որ այսոր գործն ի յաւտար իրաց է, որպես ի վերն յիշեր եմ» (ԱԱԱԱ, 4)։

6. Շրջադասություն (ինվերսիա). Շրջադասությունը նախադասության անդամների շարադասության ընդունված կարգի փոփոխությունն է։ Սա ոճական հնարանք է և նպատակ ունի շարադասության խախտմամբ ուշադրություն հրավիրել այն բառի կամ արտահայտության վրա, որը տվյալ դեպքում կարևոր է։ Օրինակ՝

Քաղաքից լսվում է մի ձայն։ Կարծես աղաղակ է։
Ահով է լցված օդը։ (Չարենց)։

Համեմատենք՝

Մի ձայն է լսվում քաղաքից։ Կարծես աղաղակ է։
Օդը լցված է ահով։

Վերջին նախադասությունը ձևակերպված է հայերենի շարադասության կանոնների պահպանմամբ, բայց չունի այն արտահայտման պատկերավորությունը, ինչ որ բնօրինակը։

Շրջադասությունը շարահյուսական անհետևողություն համարելիս՝ նկատի ենք ունենում միջին հայերենում նկատվող շրջադասության այնպիսի արտահայտությունները, որոնք առաջանում են ոչ թե որպես խոսքի հնարանք, այլ՝ որպես քերականական և ոճական սխալ կամ անկապակցություն։ Նախադասության անդամների սխալ շարադասությունը այստեղ ստեղծում է անհասկանալիություն և ոճական անհարթություն։ Այսպես, օրինակ, հայերենի զարգացման բոլոր շրջաններում էլ ընդունված կանոն է նախադասության մեջ համադասական շաղկապով կապված համազոր անդամների իրար մոտ շարադասվելը։ Այս սկզբունքի խախտումը առաջացնում է շարահյուսական անհետևողություն. «Ապա թէ ուրդի, որ ի ճանպահ հարամիք ի վերայ ընկնին ու կամ յայլ տեղ, որ կամենան զինք ու զիր ընկերքն սպանել, նա վասն այնոր սպաննէ զթշնամին անձին իւրոյ, երթայ առ եպիսկոպոսն» (ՍԳԴ, 37)։

Համեմատենք՝ «Ապա թէ ուրդի, որ ի ճանպահ ու կամ յայլ տեղ հարամիք ի վերայ ընկնին, որ կարենան զինք ու զիր ընկերքն սպաննել...»։ Երբեմն շարադասության խախտմամբ արտահայտված այսպիսի շարահյուսական անհետևողությունը մթագնում է նախադասության որոշակի իմաստը։ Օրինակ՝ «Եւ յորժամ այս խոտէն յում գլուխն ցաւի՝ կախեն, գլխուն ցաւիլն խաղուի» (ԱԱԱԱ, 84)։

Ժամանակակից հայերենով այս նախադասության իմաստը կարելի է մեկնաբանել՝ ա) երբ ում գլուխը այս խոտից (իմա՝ խոտի պատճառով) ցավի, կախեն, գլխի ցավը խաղաղվի։ բ) երբ ում գլուխը ցավի, այս խոտից կախեն, գլխի ցավը խաղաղվի։ Առաջին իմաստը, պարզ է, հակասում է բնօրինակի ներքին բովանդակությանը, որովհետև Ամիրդովլաթ Ամասիացին «Անդիտաց Անպետ» բժշկական աշխատանքում նպատակ ունի բնության մեջ գտնվող բոլոր բույսերի ու դեղամիջոցների օգտակար կողմերի նկարագրությամբ օգնել հիվանդությունների բուժմանը, հետևաբար նա խորհուրդ չէր տա գլխացավով հիվանդին կախել, իմաստ, որ անհեթեթ է, բայց բխում է նախադասության քերականական ու շարահյուսական կառուցվածքից։ Հետևաբար այս նախադասությունը շարադասված պետք է լիներ այսպես.

«Եւ յորժամ յում գլուխն ցաւի՝ այս խոտեն կախեն, գլխուն ցաւիլն խաղուի»։

7. Ուղղակի և անուղղակի խոսքի բերականական հատկանիշների խառնում. Միջին հայերենին ուրիշի խոսքի անուղղակի հաղորդման ձևը հատուկ չէ։ Նույնիսկ որ, զի, թէ շաղկապներով կապակցվելիս՝ ուրիշի անուղղակի խոսքը պահպանում է ուղղակի խոսքի բոլոր հատկանիշները, այն է՝ դերանվան ու բայական ձևերի ուղղակի խոսքին հատուկ դիմային հարաբերումը, կոչականների, բացականչությունների պահպանումը և այլն։ Օրինակ՝

«Շահ Սլէյման թագաւորէն ըռաղամ եկաւ Երևան, Սէֆիղուլի խանին վերայ, թէ այգ հաղ զառաբի խոջայ Սիամոնտ գայ Ըսպահան» (ՁԱՕ, 82)։ Երբեմն հեղինակային խոսքի և ուրիշի ուղղակի խոսքի արտահայտման պլանների այսպիսի խառնումը առաջացնում է երկիմաստություն։ Օրինակ՝

«Ու մարդ մի այլ կայր յիմ ժամանակին, եւ կարծեր՝ թէ Անգլուխ եմ. բայց բժշկապետերն ճարտար էին, յարմրճէ սաղաւարտ դուգեցին եւ ի գլուխն եդին և երբ ի գլուխ ծանրացաւ՝ ապա գիտաց թէ գլուխ ունիմ» (ԱԱՂՀ, 362)։ Կարելի է սխալ կերպով կարծել, թե գլուխ ունենալու կամ չունենալու մասին կասկածում է խոսողը՝ հեղինակը, մինչդեռ այդ մտքերը «մարդունն» են։ Այս նախադասությունը քերականորեն ճիշտ կլիներ այսպես՝ «Ու մարդ մի այլ կայր յիմ ժամանակին, եւ կարծեր թէ Անգլուխ է, բայց բժշկապետերն ճարտար էին, յարմրճէ սաղաւարտ դուգեցին եւ ի գլուխն եդին և երբ ի գլուխ ծանրացաւ՝ ապա գիտաց թէ գլուխ ունի։

Բայց սա կլինի ուրիշի անուղղակի խոսքի շարահյուսական ձև, որը միջին հայերենում, ինչպես ասվեց, գոյություն չունի։

Շարահյուսական կառուցվածքային անհետևողություն է առաջանում նաև այն դեպքերում, երբ ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքին միանում է առանց ասացակցն բայի, կամ նույնիսկ թէ շաղկապի, որը միշտ հատուկ է բնորոշ այսպիսի կառուցվածքների համար։ Օրինակ՝

«Օրիկ մի չելար չկիր՝ «Ի՞նչ կանես կամ ո՞նց կու լինիս» (ՆՔ, 166)։ Եթե այս նախադասության առաջին և երկրորդ մասերը կապակցվեին ասեիր կամ չասիր բառով, ապա այն կլիներ ուրիշի ուղղակի խոսքի բնորոշ արտահայտություն։ Բայց միջին հայերենի մեջ ծանոթ դրականության մեջ այդպիսի փաստի չենք հանդիպել։

***

Շաղկապներն ու կապակցող բառերը բարդ նախադասության մեջ իրենց հատուկ շեշտված դիրքով ու հնչարտաբերությամբ դառնում են այն հիմնական մեխը, որ ամրացնում են նախադասության մասերը։ Դրանց սխալ գործածությունը կամ դեղչումը առաջացնում է շարահյուսական անկապակցություն։

1. Հարաբերյալ ու հարաբերական բառերի դեղչում. Մեծ մասամբ կապակցման միջոցների պատճառով շարահյուսական անհետևողություն ստացվում է այն դեպքերում, երբ հարաբերական կապակցության մեջ բաց է թողնվում գլխավոր նախադասության հարաբերյալ բառը։ Օրինակ՝ «Մութն ու խաւարն է դիս պատել, որ այլ լուսոյ ճար չունենամ» (Ֆր., 253)։ Այս նախադասությունը շարահյուսորեն ճիշտ ձևակերպված կլիներ, եթե երկրորդ նախադասության մեջ որ-ը չլիներ։ Համեմատենք՝ «Մութն ու խաւարն է դիս պատել, այլ լուսոյ ճար չունենամ»։ Սակայն որ բառի ներկայությունը հուշում է, որ նախադասության առաջին և երկրորդ մասերը կապված են ստորադասական հարաբերությամբ և գլխավոր մասում հարաբերյալի առկայությունը անհրաժեշտ է։ Համեմատենք՝

«Մութն ու խաւարն դիս հանց է պատել, որ այլ լուսոյ ճար չունենամ»։ Այսպիսով, ստորադասական նախադասության գլխավոր մասում հարաբերյալ բառի բացակայությունը առաջացրել է հնչարտաբերական ու իմաստային անավարտունություն, նպաստել նախադասության ամբողջական իմաստի բաղմանշանակությանը։

Երբեմն կառուցվածքային տարրերից մեկի այսպիսի դեղչումը խիստ ազդում է իմաստի վրա։ Օրինակ՝ «Ու կարեն ձեռնադրել եպիսկոպոսունք, օրհնել մեռոն, բայց որ յայլ մեռոնէն մասն ունենան, որ խառնեն ի ներք» (ՍԳԴ, 40)։

Ճիշտ կլիներ՝

«Ու կարեն ձեռնադրել եպիսկոպոսունք, օրհնել մեռոն, բայց հայնց, որ յայլ մեծերոյն մեռոնէն մասն ունենան, որ խառնեն ի ներք»։

Հանդիպում են նաև հարաբերական բառի բացթողման դեպքեր, ինչպես օրինակ՝

«Նա ե՞րբ կարէ հանց բան ասել, ով որ կարդայ աւրհնէ զնա» (Ֆր, 287)։ Համեմատենք՝

«Նա ե՞րբ կարէ հանց բան ասել, որ ով որ կարդայ աւրհնէ զնա»։ Հարաբերական բառի զեղչումը այս նախադասության մեջ արդարացվում է գրվածքի բնույթով. որ բառի ավելացմամբ բանաստեղծության հանդը խախտվում է։ Բացի դրանից, կառաջանար նույնանուն բառերի (որ, ով, որ) կրկնություն)։ Սակայն նույն այս նախադասությունը կարելի է փոխակերպել այնպես, որ քերականորեն և բովանդակությամբ ճիշտ լինի՝ «Նա ե՞րբ կարէ հանց բան ասել, որ ով կարդայ, աւրհնէ զնա»։

2. Կապակցական միջոցների գործառության խախտում. Այս երևույթը տարբերվում է շարահյուսական անհետևողության մյուս արտահայտություններից նրանով, որ այն հանդես է գալիս ոչ թե որպես պատահական սխալ, այլ տվյալ շրջանի համար որպես սովորական երևույթ։ Խոսքն այն դեպքի մասին է, երբ ստորադասական նախադասությունը կապակցող հարաբերական բառը հանդես չի գալիս իր բուն դերով. դրա փոխարեն գործածվում է մի ուրիշ բառ, մեծ մասամբ՝ անձական դերանուն, որը իր վրա է վերցնում երկրորդական նախադասության բառական միջավայրում քերականական համաձայնության դերը։ Քերականական-ոճական այսպիսի արտահայտությունը շատ գործածական է որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցման մեջ։ Օրինակ՝ «Ի հոն հանցեղ բաղնիք մի կայր, որ իւր նման իսկի չի կայր» (Ֆր., 474)։ «Եւ գտնօղն, որ գրաստն առին յիրմէ, երթայ հետ այնօր» (ՍԳԴ)։ Ինչպես տեսնում ենք, որոշիչ երկրորդական նախադասությունը կապակցող հարաբերական բառը իր նախադասության ստորոգյալի հետ թվով և գլխավոր նախադասության որոշյալի հետ հոլովով համաձայնության դերը բաժանել է նույն նախադասության մեջ հանդես եկած անձնական դերանվան հետ։ Բերված նախադասությունները կարելի է փոխակերպել հետևյալ ձևով՝ «Ի հոն հանցեղ բաղնիք մի կայր, որի նման իսկի չի կայր»։ «Եւ գտնօղն, որից գրաստն առին, երթայ հետ այնոր»։

3. Շաղկապների գործածության սկզբունքների խախտում. Բարդ նախադասության կապակցության միջոցների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում շաղկապները՝ իրենց տարբերակված գործածությամբ։ Երբեմն շաղկապը հաղորդվելիք խոսքին տալիս է իմաստային այնպիսի նրբություն, որը մի այլ միջոցով վերարտադրել հնարավոր չէ, երբեմն էլ նախադասության արտահայտած իրական իմաստը քերականական ձևակերպման այնպիսի պահանջ է առաջացնում, որի դեպքում շաղկապի գործածությունը ընտրությամբ չի որոշվում, այլ՝ անհրաժեշտաբար։ Այս սկզբունքի խախտումը առաջացնում է շաղկապների սխալ գործածության մի քանի դեպքեր։ Դրանք են.

ա) շաղկապների գործառական փոխանցումներ. Միջին հայերենին բնորոշ է բարդ նախադասության կապակցման դերով հանդես եկող շաղկապների ու շաղկապային բառերի բազմագործառական կիրառությունը և դրա հետ կապված՝ նրանց բազմիմաստությունը։ Շաղկապների սխալ ընտրությունը երբեմն հասցնում է այնտեղ, որ շաղկապի արտահայտած իմաստը բացահայտորեն հակադրության մեջ է մտնում նախադասության իրական բովանդակության հետ։ Օրինակ՝ «...զի դեղերուն բնութիւնն զետ սլեհ է, որ կովուն ժամն հաքիմն

որպես սլեհտար Լ» (ԱԱՂՀ, 13)։ Ինչպես տեսնում ենք, նախադասության արտահայտած իրական բովանդակությունը թելադրում է նրանց՝ հակադրա-զուգադրական հարաբերությամբ կապակցություն։ Համեմատենք՝ «...ղի դեղերուն բնութիւնն դեռ սլեհ է, իսկ կովուն ժամն հաքիմն որպես սլեհտար է»։

Ըստ ընկալման, շաղկապի սխալ գործածություն կարելի է համարել նաև հետևյալ օրինակները՝ «Ապա թէ կինն մեռել լինի՝ նա աղատ է այրն որ կարէ այնել դիր անծառութիւն իրքն և դապրանքն՝ զինչ իր պիտի» (Անս, 21)։ «Եվ երբ փոխեցի ես՝ յուղարկեցի դարձեալ ի յԱնտաքոյ դարպասն, որ դիմընդդիմեցին և հաստատեցին իրենց ձեռնդրերովն և վկայութեամբն ու ստոյգ է և ըղորդ բան բանի» (Անս, 3)։ Համեմատենք՝ «Ապա թէ կինն մեռել լինի՝ նա աղատ է այրն և կարէ այնել դիր անծառութիւնն...»։ «Եւ երբ փոխեցի ես՝ յուղարկեցի դարձեալ յԱնտաքոյ դարպասն, որ դիմընդդիմեցին...»։ Պետք է նկատել, որ այս առումով որ շաղկապը ամենից շատ է իր վրա վերցնում ուրիշ շաղկապների իմաստային դերը։ Օրինակ՝ «Արդ, դրեցաւ սուրբ և աստուածաշունչ մատեանս առ ոտս սուրբ առաքելոյս Դամաշիէլի... ի դառն և վշտաբեր ժամանակիս, որ (հմմտ. երբ—Լ. Կ.) աշխարհս լի էր տառապանօք՝ երաշտութեամբ, դերութեամբ» (ԺԴ Հիշատակարաններ, 514)։

Երբեմն շաղկապի ոչ թե լիովին սխալ, այլ անհամապատասխան գործածությունն առաջացնում է բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերության բաղմիմաստություն։ Այսպես, օրինակ՝ պայմանի սուորդասական նախադասությունները միջին հայերենում կապակցվում են զուգադիր շաղկապներով. զուգադրության առաջին բաղադրիչները լինում են որ, թէ, յորժամ, երբ շաղկապները։ Այն դեպքում, երբ սրանց իմաստային տարբերություններ նկատի չեն առնվում, և մի շաղկապի փոխարեն գործածվում է մյուսը (հատկապես որ բազմագործառական շաղկապը), առաջանում է երկիմաստություն։ Օրինակ՝ «Եւ արդ որ կամի ճշմարտութեամբ ուղղել զԱնսիդս և զիրաւունքս, նայ այս է ըղորդ Անսիզն Անտաքոյ» (Անս, 3)։ Այս նախադասությունը կարելի է հասկանալ երկու ձևով՝ 1. «Եւ արդ ով կամենում է ճշմարտությամբ ուղղել Անսիզները և իրավունքները, ապա այս է Անտիոքի ճիշտ անսիզը», 2. «Եվ արդ եթե կամենում է ճշմարտությամբ ուղղել Անսիզները և իրավունքները, ապա այս է Անտիոքի ճիշտ Անսիզը»։

Շաղկապային փոխտնցումների այսպիսի դեպքերը մասամբ բացատրվում են նաև նրանով, որ որոշ շաղկապներ դեռևս կայունացած չեն իրենց հիմնական և հայոց լեզվի զարգացման ընդհանուր լեզվական պահանջներին համապատասխան ֆունկցիաների մեջ։

բ) անշաղկապություն. խոսքն այստեղ վերաբերում է այնպիսի անհետևողության, երբ շաղկապը բաց է թողված, բայց նրա անհրաժեշտությունը կա նախադասության ամբողջական իմաստը ըմբռնելու և կապակցությունը շարահյուսորեն ճիշտ ձևավորելու համար։ Օրինակ՝ «Բայց պիտի որ սլեհտարն դիտուն լինի զպետքն որպէս տան զսլեհն» (ՂՀ, 351)։ Համեմատենք՝ «Բայց պիտի որ սլեհտարն դիտուն լինի զպետքն, թէ որպես տան զսլեհն» (ՂՀ, 351)։

գ) բազմաշաղկապություն. շարահյուսական այսպիսի անհետևողությունը հանդես է գալիս միևնույն նախադասության կազմում տարբեր շաղկապների՝ իրար կողքի գործածությամբ, որ ճապաղ ոճ է ստեղծում։ Օրինակ՝ «Ապա թէ ով դիտէ որ յետի այրկանն դստերքն մեռնին, նա թէ ու կենայ հայրն կենդանի, նա մենակ դառնայ հայրենիքն ի յառջի այրկանն դստերքն» (Անս, 39)։

դ) շաղկապի ավելորդ գործածություն. նախադասության անդամների միջև առանց անհրաժեշտության դրվում է շաղկապ, մեծ մասամբ և համադասական շաղկապը։ Օրինակ՝ «Եթէ այրն և եթէ կինն որ ու լինի և ոննան որդիք և կամենան տիաթիկ այնել, ու տառպելցել լինան և անճարկել...» (Անս, 53)։ «Իմաստուն մարդն ու սուրբ աղբիւր ջրոյ է, Որ ծարաւ լինք դիմէ, զնա արբուցանէ» (ՀԵՏ, 188)։

Ամփոփելով նշենք, որ նկատված փաստերը չեն սպառում միջին հայերենում տեղ դտած շարահյուսական, առհասարակ քերականական անկապակցությունների բոլոր դեպքերը։ Մինչդեռ դրանց մանրամասն ուսումնասիրությունը և լեզվական վերլուծությունը անհրաժեշտ է ոչ միայն մեր լեզվի զարգացման քննվող շրջանի մասին մեր ըմբռնումները հարստացնելու, այլև ընդհանուր լեզվաբանական այնպիսի հարցերի մեկնաբանման համար, ինչպիսին խոսքի հոգեբանությունն է, լեզվի նորմավորումը և այլն։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անս— Անսիզ Անտիոքայ
ՁԱՕ— Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւնք
ԱԱԱԱ— Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց Անպէտ
ԱԱՂՀ— Ամիրդովլաթ Ամասիացի, Ղևոնդ Հովնանյան
ՆՔ— Նահապետ Քուչակ
ՍԳԴ— Սմբատ Գունդստաբլ, Դատաստանագիրք
Ֆր— Ֆրիկ

АНАКОЛУФ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Л. Л. КАРАПЕТЯН

Резюме

Среднеармянский язык по сравнению с грабаром отличается богатством литературных жанров и связанных с ними функциональных стилей.

Будучи выражением живой народной речи, язык этого периода проявляет ряд форм анаколуфа, которые нами делятся на две основные группы: а) нарушение правильной синтаксической связи между частями предложения, б) нарушение в употреблении союзов и относительных слов.

В I группу входят: смешение конструкций, недостаточность конструкций, повтор слов или словосочетаний (плеоназм, тавтология), аттракция, несвязанность языковой цепи, инверсия, смешение конструкций прямой и косвенной речи.

Во II группу входят эллипсис относительных слов, союзов, их неуместное и ошибочное употребление и т. д.

В пределах одной статьи невозможно исчерпать все виды анаколуфа, встречаемые в письменной речи названного периода, однако подробное изучение и лингвистический анализ их необходимы не только для обогащения нашего представления о среднеармянском языке, но и для выяснения такого общеязыкового вопроса, как психология речи.